ԵԿԵՂԵՑԻ - ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐՈՒՄ (XVII Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՔԱՆԱՔԱՐԱ
ԳՊՀ դասախոս,
ԳՊՀ որակի ապահովման բաժնի մասնագետ
էլփոստ՝ q.hayrapetyan@gsu.am
ԳՈԶԵՅԱՆ ՎԱՀԵ
ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
պատմության բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող
էլփոստ՝ vahegozeyan@mail.ru

Հոդվածում ներկայացվում է XVII դ. առաջին կեսին Սեֆյան շահերի (Աբբաս Ա, Սեֆի, Աբբաս Բ) հրովարտակներն ու հրամանագրերը, որոնք վերաբերում են հայոց եկեղեցուց գանձվող հարկերին, դրանց տեսակներին, Սուրբ Էջմիածնի, Գանձասարի կաթողիկոսության ու նրանց պատկանող վանքերի ու կալվածքների իրավական կարգավիճակին և հարկային արտոնություններին: Հրովարտակների քննությունը թույլ է տալիս հստակություն մտցնել Սեֆյան Իրանի տիրապետության տակ ապրող հայ հոգևորականության նկատմամբ տարվող շահական քաղաքականության հիմնական ուղղվածության, իրանական իշխանությունների հետ փոխհարաբերություններում Էջմիածնի դերի ու նրա ենթակայության տակ գտնվող հայոց վանքերի ու կալվածքների պաշտպանության հարցերում:

Բանալի բառեր՝ *Սեֆյան Պարսկաստան, պարսկերեն վավերագրեր, Արևելյան Հայաստան, շահ Աբբաս Ա, շահ Սեֆի, շահ Աբբաս Բ:*

XVI-XVII դարերի ընթացքում Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև մղվող պատերազմներում հարաբերական դադար հաստատվեց 1555թ. մայիսի 29-ի Ամասիայի պայմանագրով, որի համաձայն՝ Հայաստանն առաջին անգամ բաժանվեց Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև: Այդ երկու պետությունների՝ Հայաստանով անցնող սահմանագիծը դարձավ Հայկական Պար լեռնաշղթան: Նրանից դեպի հարավ ընկած հայկական հողերը՝ Բարձր Հայքը, Տուրուբերանի, Աղձնիքի, Ծոփաց և Վասպուրականի նահանգները անցան Թուրքիային, իսկ դեպի հյու-

սիս ընկած շրջանները՝ Շիրակը, Գուգարքը, Արարատյան դաշտը, Սյունիքը և Վասպուրականի արևելյան մի քանի գավառներ անցան Պարսկաստանին[1]:

Քաղաքական համեմատաբար աշխույժ կյանքով և հասարակության տարբեր խավերի առավել ակտիվությամբ հատկապես աչքի էր ընկնում Արևելյան Հայաստանը, որտեղ XVII դարի առաջին կեսին կենտրոնացավ հայկական հոծ բնակչությունը, ուժեղացավ հոգևոր կենտրոն Էջմիածինը: Այս շրջանում հայ հասարակության մեջ գերիշխող դիրք գրավեց հոգևորականությունը:

Հայաստանի նվաճումից ու հայերի պետականության անկումից հետո Էջմիածնի կաթողիկոսները հայերի միակ ներկայացուցիչներն էին շահերի առաջ: Հայկական և պարսկական աղբյուրներում շահերի կողմից հայոց եկեղեցու նկատմամբ վարած հովանավորչական քաղաքականության մասին առանձնապես խոսում է Առաքել Դավրիժեցին: Հետաքրքիր տեղեկություններ են վկայված Սիմեոն Երևանցի կաթողիկոսի «Ջամբռ» աշխատությունում: Սույն հոդվածը գրելիս հիմնականում օգտվել ենք Մատենադարանում պահվող պարսկերեն հրովարտակներից, որոնց մի մասը թարգմանել և հրատարակել է Հակոբ Փափազյանը[2]: Այդ հրովարտակները օգնում են որոշ պարզաբանումներ կատարել հայոց եկեղեցու և Սեֆյան Իրանի փոխհարաբերություններում:

XVII դարի սկզբին երկիրն ու ժողովուրդը քաղաքական ու տնտեսական ծանր ճգնաժամ էին ապրում: Վանական կյանքում մուտք էին գործել զազրելի բարքեր, որի մասին է վկայում նաև պատմիչ Առաքել Դավրիժեցին. «…հայոց ազգիս բոլոր վանքերում յուրաքանչյուր սևագլուխ ուներ իր սեփական հարստությունը՝ այգի, ծաղկաստան, փեթակ, տուն, մառան, ամբարներ, եկամուտներ: Նաև ընդհանուր եկամուտը բաժանում էին իրար մեջ: Եվ այդ ամենը ծախսում էին իրենց, իրենց ազգականների, իրենց հաճելի մարդկանց կարիքների համար: Եվ աստծուն նվիրված վայրերը, որոնք սքանչելագործ սրբերի և աստծու շնորհները կրող հրաշքների բնակարան-

[1] Հայ ժողովրդի պատմություն (սկզբից մինչև XVIII դ. վերջը), Եր., ԵՊՀ հրատ., 1975, էջ 605-606:

[2] Փափազյան Հ.,Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, պրակ Բ, Եր., 1959:

ներ են, լցված էին կանանցով, տանտիկիններով և իրենց ազգականներով»[1]:

Բարքերի համատարած խաթարումը տարածվել էր ինչպես գյուղական քահանաների ու եկեղեցու ստորին պաշտոնյաների, այնպես էլ բարձրաստիճան հոգևորականների վրա. «Այդպես էլ գյուղական քահանաները անունով էին միայն քահանաներ, բայց ոմանք ստանձնում էին մելիքության, ոմանք տանուտերության իշխանության, ոմանք պոռնիկներ ու երկկանայք էին, ոմանք միանում էին այլազգի իշխաններին և դառնում նրանց չար գործերի արբանյակներ, քրիստոնյաների մատնիչներ»[2]:

Հայոց եկեղեցին հարկատու էր շահերին: Այստեղ որոշակի քաղաքական նկատառումներ էլ գոյություն ունեին: Հայոց եկեղեցին օգնում էր պարսկական տիրակալներին՝ մի կողմից հայերին հնազանդ պահելու համար, մյուս կողմից՝ Թուրքիայի դեմ մղած պատերազմներում: Եկեղեցին Անդրկովկասի հայ վաճառականության հետ միասին իրանական կողմնորոշման դիրքորոշում ուներ և աջակցում էր շահերին[3]: Կաթողիկոսները, վանահայրերը և հոգևոր թեմի առաջնորդները հաստատվում էին շահերի կամ տեղական իշխանությունների կողմից և լիովին ենթակա էին նրանց:

Կարևոր է, որ հայերը իրավունք չունեին առանց իրանական իշխանությունների թույլտվության կառուցել կամ վերանորոգել կրոնական հիմնարկություններ:

XVII դարի սկզբին հայ հոգևորականները միաբանված չէին: Էջմիածնի պարտքերը մարելու համար անգամ երկու կաթողիկոս էր ընտրվել, որոնք անգամ Էջմիածնում չէին նստում՝ գերադասելով Երևանը: Կաթողիկոսները միայն ժողովարարությամբ էին զբաղված, իսկ Էջմիածնի վանքի ներսն ու շուրջը կատարյալ ամայություն և ավերածություն էր տիրում: Իրենց անհեռատես քաղաքականությամբ Դավիթ և Մելքիսեթ կաթողիկոսները էջմիածինը սնանկության են հասցնում: Դավրիժեցին նշում է, որ նրանք պարտատերերից ու թագավորական հարկահաններից թաքնվում էին, փախուստի դիմում. «Նրանց կյանքը այն ժամանակ շատ էր ողորմելի, ինչպես որ պատ-

---

[1] Առ. Դավրիժեցի, Պատմություն, թարգմ., առաջաբանը և ծանոթագրութ.՝ Վ.Առաքելյանի, Եր., 1988, էջ 288:

[2] Նույն տեղում, էջ 288-289:

[3] Петрушевский И. П., Персидские официальные документы XVI-нач. XVII вв. как источник для изучения феодальных отношений в Азербайджане и Армении // Проблемы источниковедения, том III, 1940, стр. 26.

մում են տեսնողները»[1]: Մայր Աթոռի պարտքն հասնում է 50000 ղուրուշի: Երկու կաթողիկոսները ստիպված էին խնդրելու Սրապիոն վարդապետին՝ վճարելու այդ պարտքերը, փոխարենը խոստանում էին նրան բազմեցնել կաթողիկոսական աթոռին: Վերջինս «մեծահարուստ հոգևորական էր և եկավ ոչ թե կաթողիկոս դառնալու, այլ Մայր Աթոռը փրկելու: Նա մեծ հարգանք էր վայելում ժողովրդի շրջանում: 1603թ. օգոստոսի 14-ին նրան ձեռնադրեցին Ամենայն հայոց կաթողիկոս և վերանվանեցին Գրիգոր ըստ սուրբ Գրիգոր Լուսավորչի անվան»[2]: Հայոց հոգևոր կենտրոնն այսպիսի վիճակում էր, երբ շահ Աբբաս Ա-ն (1587-1629թթ.) նախապատրաստվում էր Հայաստան արշավելու:

1605թ. Մեծ գաղթի ժամանակ Մելքիսեթն ու Դավիթը նույնպես Սպահան էին գաղթել: Մելքիսեթը, որ հռչակված էր իր փառասիրությամբ ու ոչնչի առաջ կանգ չառնելու բնավորությամբ, շուտով կարողանում է ետ վերադառնալ և շարունակել կողոպտել ժողովրդին: Օգտագործելով իր դիրքը և վայելելով Ամիրգունա խանի հովանավորությունը՝ Մելքիսեթը փորձում է ապահովել միանձնյա իշխանությունը և մեծ հարստություն կուտակել: Այդ նպատակով նա կաթոլիկ միսիոներներին չնչին գներով վաճառքի է հանում հայ լուսավորչական եկեղեցու ճանաչված սրբությունները: Այդ քայլը դիտվեց որպես սրբապղծություն: Ջուղայեցի հայերը, Դավիթ կաթողիկոսի գլխավորությամբ, այդ մասին գանգատվում են շահին: Վերջինս հրամայում է հետապնդել ու պատժել այդ գործի բոլոր մասնակիցներին: Դավիթ կաթողիկոսին հատուկ հրովարտակով ուղարկում է Երևան մեռոն եփելու ու Էջմիածնի գործերին վերահասու լինելու համար[3]: Այդ նույն հրովարտակով, որը ուղղված էր Ամիրգունա խանին, շահը հրամայում է գտնել ու պատժել այն մարդկանց, ովքեր օգնել են կաթոլիկ միսիոներներին գողանալու սուրբ Հռիփսիմեի մասունքները: Այս հրովարտակից երևում է, որ կա՛մ շահ Աբբասը Էջմիածնի գանձերը համարել է իր երկրի սեփականությունը և թույլ չի տվել այն դուրս հանել, կա՛մ շահը մեծ հարգանք է ունեցել հայոց եկեղեցու և քրիստոնեական արժեհամակարգի հանդեպ: Այնուամենայնիվ, մի բան հաստատ է. եթե շահ Աբբասը հարգանք տածեր հայերի կրոնական մասունքների նկատմամ, բազմահազար գաղթեցված հայերին նոր բնակավայ-

[1] Առ. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 20:

[2] Նույն տեղում, էջ 23-24:

[3] Փափազյան Հ., Հրովարտակներ, պրակ Բ, վավ. 10, էջ 90-91:

ների հետ հիմնովին կապելու պատրվակով չէր որոշի քանդել Էջմիածնի տաճարը, որպեսզի Սպահանում և Նոր Ջուղայում նոր Էջմիածին կառուցեր՝ կաթողիկոսական աթոռով: Շահ Աբբասի այս գաղափարը հղի էր ոչ միայն Իրանում վերաբնակեցված, այլ նաև բուն Հայաստանում և հարևան երկրներում բնակվող հայությանը մայր երկրից կտրելու վտանգով:

Էջմիածնի կաթողիկոսության շուրջ ծավալված աթոռակալական պայքարը և դրա հետևանքով ստեղծված ծանր պայմանների պատմությունը ավարտվում է 1617թ. Տաթևի Մեծ Անապատի հոգևոր գործիչ Մովսես Խոտանանցու՝ Էջմիածնի շուրջ ծավալած բարենորոգումներով[1]: Նույն թվականին կալանքից ազատվում է Մելքիսեթ կաթողիկոսը և Էջմիածնի կաթողիկոսական աթոռը նորից ձեռք բերելու նպատակով հանձն է առնում ամեն տարի պետական գանձարանը 100 թուման[2] կանխիկ դրամ մուծել: Այս գումարը նշանակվում է արքունի թռչնանոցի բազեապան Աղուրլու բեկին որպես ամենամյա ռոճիկ (համեսալե), որն անմիջապես իր ստորադաս զինվորականներին ուղարկեց Էջմիածին՝ հանձնարարելով նրանց մնալ այնտեղ և ամեն տարի ապահովել հիշյալ գումարի գանձումը կաթողիկոսից[3]: Սակայն Մելքիսեթն այլևս չէր վայելում ժողովրդի հարգանքը և զրկված էր ամեն տեսակի եկամուտներից: Ի վերջո, Մելքիսեթի պատճառով Էջմիածնի վրա է բարդվում մի քանի հարյուր թումանի խոշոր պարտք՝ իր ահռելի տոկոսներով: Այս անելանելի իրավիճակից Էջմիածինը փրկելու նպատակով Մովսես Խոտանանցին, որը ժողովրդի և հոգևորականության շրջանում մեծ համբավ էր վայելում, ուղևորվում է Ղազվին՝ Էջմիածինը տարեկան 100 թումանի պարտադիր հարկից ազատելու: Նա տիրապետում էր մոմ սպիտակեցնելու արհեստին և դրանով վայելում էր շահի համակրանքը: 1627թ. Մովսես Խոտանանցին շահ Աբբասի հրամանով դառնում է Էջմիածնի լուսարարապետ: 1629թ., երբ մահանում է շահ Աբբաս Ա-ն, օգտվելով պատեհ առիթից, Մովսեսը և մի խումբ հայ առևտրականներ, մեծ գումարներ ծախսելուց հետո ոչ միայն վերցնում են հարկը, այլ միաժամանակ Մովսես վարդապետին նշանակել են տալիս Էջմիածնի կաթողիկոս: 100 թուման «փիշքեշ»-ը կամ, ինչ-

---

[1] Այդ մասին տե՛ս Առաքել Դավրիժեցի, Պատմություն, էջ 90-91, Գրիգոր Դարանաղցի, ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1915, էջ 284-297, Մաղաքիա արք. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, էջ 2311-2400, Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, Եր., 1946, էջ 268-269, 280-290:

[2] Թուման- դրամական խոշոր միավոր, որ հավասար էր 10 000 դինարի, Փափազյան Հ., Հրովարտակներ, պրակ Բ, էջ 214-215:

[3] Փափազյան Հ., Հրովարտակներ, պրակ Բ, էջ 35:

պես Դավրիժեցին է նշում, «մուղադան»[1] չափազանց մեծ գումար էր, որը, վանքը չկարողանալով հատուցել, ի վերջո հայ աշխատավորության գլխին էր կոտրվում. «Բայց աստծու մարդ այս տեր Մովսես վարդապետը մշտապես իր հոգում վարանում, տխրում ու ցավում էր հարյուր թուման տուգանքի համար, անտանելի բեռ ու անխզելի շղթա եղավ Էջմիածնի Սուրբ աթոռի վրա. ոչ միայն նա, այլև ողջ հայոց ազգը տխրում ու ցավում էր»[2]:

Այս հարկից ազատվելով, Մովսես կաթողիկոսը կարողանում է ծավալել շինարարական աշխատանք, որը անավարտ է մնում: Կաթողիկոսը վախճանվում է 1632թ.՝ սկսած գործի շարունակող դարձնելով Փիլիպոս Աղբակեցուն (1633-1655թթ.): Իր կաթողիկոսության շուրջ 20 տարիների ընթացքում նա կարողանում է ընդարձակել վանքապատկան կալվածքները և մեծացնում է այգիների ոռոգման հնարավորությունները, Էջմիածնի վանքը ձեռք է բերում նաև գանձագին մուլքեր[3]: Մատենադարանի պարսկերեն մի վավերագրից[4] պարզվում է, որ XVII դարի առաջին տասնամյակներում Էջմիածնի վանքը ոչ մի մուլքային գյուղ չի ունեցել, բացի մի քանի հողակտորներից, այգիներից ու մեկ ձիթհանքից: Մեկ ուրիշ վավերագրով[5] հայտնի է դառնում՝ 1620թ. Երևանի բեկլարբեկ Ամիրգունա խանի գրությամբ արդեն Էջմիածնին է վերադառնում Վաղարշապատ (Ուչքիլիսա) գյուղը: Սակայն շուտով այս փաստաթուղթը կորցնում է իր ուժը, և Վաղարշապատ գյուղը նորից բռնի կերպով սեփականացվում է Ամիրգունա խանի որդու՝ Թահմազկուլի խանի կողմից[6]:

Փիլիպոս կաթողիկոսի տնտեսական քաղաքականության շնորհիվ 1630-1640-ական թթ. Էջմիածնի նոր վանական տնտեսությունը վերելք է ապրում: Հատկապես 1636թ. Երևանի վերագրավմամբ կաթողիկոսը կարողանում է շահ Սաֆիի օժանդակությամբ զբաղվել Էջմիածնի վանքի տնտեսության ընդարձակմամբ: 1639թ., երբ կնքվում է Կասրե-Շիրինի պայմանա-

---

[1] Մուղադան կտրված, որոշված, այսինքն՝ անփոփոխ, որոշակի չափի սիստեմատիկ կերպով վճարվող հարկն է, Փափազյան Հ., Հրովարտակներ, պրակ Բ, էջ 37:

[2] Առ. Դավրիժեցի, նույն տեղում, էջ 244:

[3] Մուլք- սեփականություն, տիրույթ, ժառանգաբար ստացած կամ դրամով գնած ու սեփականություն դարձրած հող կամ անշարժ կալվածք, Փափազյան Հ., Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ Ա, Եր., 1956, էջ 115:

[4] Փափազյան Հ., Հրովարտակներ, պրակ Բ, վավ. 11, էջ 91:

[5] Նույն տեղում, վավ. 14, էջ 95-99:

[6] Սիմէօն Երեւանցի, Ջամբռ. Գիրք, որ կոչի յիշատակարան, Վաղարշապատ, 1873, էջ 103, 227-228:

գիրը, Հայաստանի արևելյան հատվածը վերահաստատվում է Պարսկաստանի կազմում, և կաթողիկոսի՝ մուաֆության[1] վաղեմի իրավունքների վերականգնման գործին ուղղված ջանքերը տալիս են իրենց պտուղները: Մատենադարանի պարսկերեն հրովարտակներից մեկից[2] պարզ է դառնում, որ 1638թ. Փիլիպոս Աղբակեցին Երևանի Քյալբ-Ալի խանից (1636-1639թթ.) ստանում է վանքի մեկ գութանի մուաֆության իրավունք: Այս հրովարտակը առաջին պաշտոնական փաստաթուղթն է, որտեղ հիշատակվում է Էջմիածնի վանական տնտեսության մեջ գութանի գործածածության մասին: Այս մեկ գութանի մուաֆության իրավունքը շահ Աբբաս Բ-ի կողմից հետագայում վերստին հաստատվել է արդեն Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի օրոք 1659թ. մարտին տրված հրովարտակով[3]:

Հայոց եկեղեցուն արտոնված էին նաև վակֆային հողատիրության իրավունքներ[4]: 1644թ. մարտի 10-ին Փիլիպոս կաթողիկոսը շահ Աբբաս Բ-ից ստացած հրովարտակով[5] իրավունք է ստանում Էջմիածնի և վանքապատկան հողերի, այգիների, ջրաղացների, կալվածքների և դրանց եկամուտների տնօրինման: Այս հրովարտակը շատ աղերսներ ունի 1613թ. շահ Աբբաս Ա-ի կողմից Մելքիսեթ կաթողիկոսին տրված հրովարտակի հետ[6], քանի որ բոլոր հողակտորները այգիներն ու պարտեզները հիշատակվում են նույն հերթականությամբ, իսկ նկարագրությունները բառ առ բառ համընկնում են իրար:

1645թ. Փիլիպոս կաթողիկոսը Երևանի բեկլարբեկ Մուհամմադկուլի խանին (1639-1647թթ.) ուղղված շահական հրովարտակով ձեռք է բերում Երևանի խանության մեջ գտնվող վանքերից որոշված գումարից ավելի թա-

---

[1] Մուաֆություն- հարկերից ազատված լինելը, հարկային իմունիտետ վայելը, գործածվում է ինչպես անհատների, այնպես էլ օբյեկտների վերաբերյալ, Կոստիկյան Ք., Հայոց եկեղեցու շահերի և հայապահպանության համար Ղազար Ջահկեցի կաթողիկոսի ձեռք բերած շահական հրովարտակների մասին, Բանբեր Մատենադարանի, թիվ 18,Եր, 2008, էջ 119:

[2] Փափազյան Հ., նշվ. աշխ., վավ. 29, էջ 119-120:

[3] Սիմէօն Երեւանցի, նշվ. աշխ., էջ 220:

[4] Վակֆ- բառացի նշանակում է կանգ առնել, ամրանալ: Այսպես էին կոչվում եկեղեցիներին կամ մզկիթներին նվիրված հողերը, քանզի նվիրվելով կրոնական որևէ հարստության՝ դրանք այլևս ենթակա չէին որևէ կարգի օտարման ու մնում էին որպես եկեղեցու կամ մզկիթի մշտական սեփականություն և, որպես այդպիսիք, ազատվում էին պետական հարկերից, Կոստիկյան Ք., Հայոց եկեղեցու իրավական և սոցիալ- տնտեսական դրության հարցերն ըստ Մատենադարանի ժԷ.-ժԸ. Դարերի պարսկերեն վավերագրերի, «Էջմիածին», 2018, Գ, էջ 69:

[5] Փափազյան Հ., նշվ. աշխ. , վավ. 26, էջ 115-116:

[6] Նույն տեղում, վավ. 19, էջ104- 106:

ֆուվաթ-ե-ջիզյա[1] չգանձելու մասին իրավունք: Հրովարտակում պարզ ասվում էր, որ ավելին չպահանջեն և ապօրինի կերպով վանքերի հայերին անհանգստություն չպատճառեն[2]:

Քանի որ Էջմիածնի վանքի և նրա ենթակայության տակ գտնվող եկեղեցիները հիմնականում իրենց տնտեսությունները այգիների ոռոգմամբ էին զարգացնում, իսկ Էջմիածնի կալվածքներից շատերը ենթակա էին հարկման, ուստի 1647թ. Երևանի բեկլարբեկ Քեյխոսրով խանի հրամանագրով[3] կալվածքների, 9 նոր այգիների և 9 քար ջրաղացների մալահոջաթը[4] և 950 գլուխ մանր եղջերավոր անասուններից գանձվող չոբանբեկին[5], իբրև նրան շնորհվող ամենամյա պարգև, զիջում է կաթողիկոսին: Այս հրովարտակում ամենայն մանրամասնությամբ տրված են հարկային գումարները, որոնք համեմատելիս նկատում ենք, որ Էջմիածնի տարեկան եկամուտը ավելանում է 99944 դինարով (մոտ 10 թուման)[6]:

Հիշատակության է արժանի այն հանգամանքը, որ խանի բացակայության ընթացքում Ղարա-Ղուբաթ քալանթարը և խանի տեղակալ Մուհամմադ բեկը կրկին Էջմիածնից փորձում են գանձել վերոհիշյալ մալահոջաթն

---

[1] Թաֆուվաթ-ե-ջիզյա (ջիզյան յուրաքանչյուր այլակրոն չափահաս տղամարդուց կանխիկ դրամով գանձվող գլխահարկն է: Գյուղերից գանձվող ջիզյան հաշվված էր և ընդհանոր գումարով հարկային մատյաններում գրանցված տվյալ գյուղական համայնքի անունով, Փափազյան Հ., Հրովարտակներ, պրակ Ա, էջ 118) - բառացի՝ ջիզյայի տարբերություն: Հայերից գանձվող գլխահարկի կամ ջիզյայի վրա ժամանակի ընթացքում բարդված գումարն է, որը հարկային մատյաններում գրանցվում, հաշվվում է առանձին և դիտվում որպես առանձին պարտավորություն, Փափազյան Հ., նշվ. աշխ., էջ 109:

[2] Նույն տեղում, վավ. 28, էջ 118-119:

[3] Փափազյան Հ., Հրովարտակներ, պրակ Բ, վավ. 34, էջ 127-129:

[4] Մալահոջաթ - մալ (ապրանք, հարստություն) և ջահաթ (կողմեր, վայրեր, վարելահողեր): Մալը սեփականության, իսկ ջահաթը գյուղի վարելահողերից գանձվող հարկն էր: Այս եկու հարկերը միշտ միատեղ էին հաշվվում և ընդհանուր գումարով գանձվում գյուղական համայնքից: Մալահոջաթ եզրույթը հաճախ դիտվում էր որպես հավաքական հարկային եզրույթ, Փափազյան Հ., Հրովարտակներ, պրակ Ա, էջ 112:

[5] Չոբանբեկի (չուփանբեկի)- սա մեծ մասամբ այն հարկն էր, որ գանձվում էր կանխիկ դրամով՝ մանր եղջերավոր անասունների դիմաց, Փափազյան Հ., Հրովարտակներ, պրակ Ա, էջ 112:

[6] Դինար- դրամական մանր միավոր, որ հայկական աղբյուրներում հաճախ անվանում են նաև «դեան» կամ «դիան»: XVII դ. Դրամական ամենափոքր միավորը եղել է 5 դինարը (մեկ ղազբեկի), 10 դինարը կոչվել է մեկ փարա, 20 դինարը՝ բիթսի, 50 դինարը՝ շահի, 100 դինարը՝ մահմուդի (սաննար), 200 դինարը՝ աբասի, 300 դինարը՝ սիսաննար (1,5 աբասանոց), 500 դինար՝ 2,5 աբասիանոց, 1000 դինարը՝ 5 աբասիանոց, 10 000 դինար՝ թուման , Փափազյան Հ., Հրովարտակներ, պրակ Բ, էջ 228:

ու չոբանբեկիի գումարները, որը նրանց մոտ չի ստացվում[1]: Խանը վերադառնում է և կրկին Էջմիածնին արդեն նոր հրովարտակով ազատում է հարկերից[2]: Այս հրովարտակում, ինչպես և նախորդում, հանգամանալից տրված են Երևան քաղաքի և նրան հարակից երեք գյուղերի և այգիների անունները, որոնք միասին կազմում են 15510 դինար, Նորք կամ Չոլմագչի գյուղում Դավիթ վարդապետի անվան այգին և Դարաքյանդի Անապատի այգին միասին 1957 դինար է կազմում, Օշականն իր Ադիբեկի և Շաղվերթի այգիներով՝ 11213 դինար, Աշտարակ և Շիրաբաղ գյոողերը՝ համապատասխանաբար 3144 և 1587 դինար: Նշվում են նաև վերոհիշյալ վայրերում գտնվող ջրաղացների քանակը և դրանց դիմաց տրված 14283 դինար նվիրատվությունը[3]: Սույն հրովարտակով խանը այդ հարկերը կրկին նվիրում է կաթողիկոսին: Թեև հրովարտակում շեշտված է այդ կալվածքների վակֆային սեփականություն լինելու հանգամանքը, այնուամենայնիվ, այն փաստը, որ մինչև 1647թ. վանքը հարկադրված է եղել դրանց համար հարկ վճարել, թույլ է տալիս հետազոտողներին ենթադրելու, որ այդ ջրաղացները, այգիներն ու կալվածքները զգալի մասով հանդիսացել են գանձագին սեփականություններ[4]: Փաստորեն սա բարձրաստիճան հոգևորականությանը որոշակի գումարով արտահայտված պարգևատրում էր, որը Փիլիպոս կաթողիկոսի անվամբ նպաստում էր Էջմիածնի նյութական վիճակի բարելավմանը: Հ. Փափազյանը Քեյխոսրով խանի բարյացակամ քաղաքականությունը Էջմիածնի և հայության նկատմամբ բացատրում է (հաշվի առնելով ժամանակակիցների տվյալները) նրա վրացի և բռնի մահմեդականացված լինելու հանգամանքով[5]:

Հայոց եկեղեցու փոխհարաբերությունները Սեֆյան պետության հետ դրական ընթացք են ստանում հատկապես շահ Աբբաս Բ-ի օրոք, ով հայոց եկեղեցու և հայ համայնքի ինքնավարական իրավունքների վերաբերյալ հրապարակում է ավելի քան քսան հրովարտակներ: Դրանցից մեկի շնոր-

---

[1] Քալանթար էին կոչվում քաղաքների կամ քաղաքային խոշոր թաղամասերի աշխարհիկ ղեկավարները, ովքեր զբաղվում էին բնակչության քաղաքացիական հարցերով և հետևում քաղաքի հասարակական գործերին: Սրանք սովորաբար ընտրվում էին քաղաքի մեծահարուստ վաճառականների կամ խոջաների շարքերից, Կոստիկյան Ք., Հայոց եկեղեցու իրավական և սոցիալ-տնտեսական դրության հարցերն ..., էջ 72:

[2] Փափազյան Հ, նշվ. աշխ., վավ. 36, էջ 134-136:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, էջ 62:

[5] Նույն տեղում, էջ 39:

հիվ վերահաստատվում և օրինականացվում էին հայոց եկեղեցու իրավական և դատական գործառույթները հայ ազգաբնակչության նկատմամբ[1]: Սույն հրովարտակով հայերին թույլատրվում է իրենց մեջ եղած վեճերը հայ հոգևորականների միջոցով հարթելու իրավունք: Հայ համայնքը բողոք է ներկայացնում, որ երբ իրենց միջև վեճեր են լինում, և նրանք այդ վեճերը իրենց քահանաների միջոցով են լուծում, մուսուլմանները նրանց նեղություն են պատճառում: Ուստի որոշվում է, որ եթե քրիստոնյաները իրար մեջ վեճ ունենան և դիմեն իրենց եպիսկոպոսներին կամ քահանաներին, ոչ ոք չարգելի և նեղություն չպատճառի: Կողմերից մեկի մուսուլման լինելու դեպքում վեճը պետք է լուծվի Շար'ի օգնությամբ[2]:

Հրովարտակներից երկուսը վերաբերում են եկեղեցիների և վանքերի վերակառուցմանը[3]: Ըստ N25 վավերագրի՝ շահ Աբբաս Բ-ն 1644թ. արգելում է, որ մուսուլմաններեը հայ համայնքից ննջեցյալների թաղման և ավերված եկեղեցիների նորոգման համար գումարներ շորթեն: Այս փաստաթուղթը առաջին պաշտոնական գրությունն է, որտեղ խոսվում է ավերված վանքերի ու եկեղեցիների վերանորոգման թույլտվության մասին: Պարզվում է նաև, որ կաթողիկոսը վանքերի վերանորոգման իրավունք ստացել էր դեռևս շահ Սեֆիի օրոք: Կոնկրետ հայտնի չէ, թե երբ է այդ հրովարտակը շահ Սեֆին հրապարակել, բայց ենթադրելի է, որ այն պետք է հրապարակված լինի 1638թ., երբ Փիլիպոս կաթողիկոսը մի շարք հարցերով դիմել էր շահ Սաֆիին, և վերջինս յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առանձին հրամաններ է տվել[4]: Փիլիպոս կաթողիկոսին հաջողվում է ամրապնդել և փաստագրել Էջմիածնի և մի քանի այլ վանքերի վակֆային-հողատիրական իրավունքները: Հափշտակիչներից շահ Աբբաս Բ-ն հետ է վերցնում ու նորից կաթողիկոսին

---

[1] Նույն տեղում, վավերագիր 41, էջ 145-146:

[2] Շար կամ շարիաթ - մուսուլմանական կրոնական օրենքներ և հաստատված նորմեր, որոնցով առաջնորդվում էր հոգևորականների բարձրագույն կրոնական-դատական ատյանը: Այս հաստատությունը հաճախ անվանվում էր հենց այդ օրենքների անունով, սակայն սովորաբար կոչվում էր «Շար'»: Շարիաթի կամ շար'ի հոգևոր դատարաններում էին քննվում մեծ մասամբ տնտեսական հարցերի շուրջ քաղաքացիների միջև առաջացած վեճերը: Այդ ատյաններին կից կային նաև նոտարական գրասենյակներ՝» մահզար»-ներ, որտեղ տեղի էին ունենում կալվածքի առուծախի, վարձակալման, փոխատվության, ամուսնության և քաղաքացիների սոցիալական դրությանը վերաբերող այլ ակտեր, կազմվում էին արձանագրություններ և տրվում էին համապատասխան փաստաթղթեր ու նոտարական պատճեններ, Փափազյան Հ., Հրովարտակներ, էջ 227:

[3] Նույն տեղում, վավ. 25 և վավ. 30:

[4] Նույն տեղում, վավ. 27, էջ 117-118:

կամ վանքի միաբանությանն է տալիս Էջմիածնի վանքի վակֆ այգիներն ու ջրաղացները[1]:

Նույն թվականին Փիլիպոս կաթողիկոսը շահին մի խնդրագիր է ներկայացնում, որում խոսում է հայ համայնքի անձնվեր և հավատարիմ լինելու մասին, այն մասին, թե ինչու Նախիջևանի և Օրդուբադի ժողովուրդը չեն եկել շահին դիմավորելու[2]: Կաթողիկոսն իր գոհունակությունն է հայտնում շահին, որ օգնել է Կարպիի գավառի ոռոգման գործն իրականացնելուն, խնդրում է կարգադրել, որ Ուչքիլիսայի (Էջմիածին) վակֆ արած վայրերը ընդմիշտ տրվի եկեղեցուն և միաբաններին, քանզի «Ուչքիլիսայի [եկեղեցին] և այլ եկեղեցիներ իրենց վակֆային վարելահողերին ու այլ [ստացվածքներին] որպես վակֆ տիրելեն սկսած սուրբ Հիսուսի և առաքյալների ժամանակներից ի վեր»[3]: Վերջում կաթողիկոսը զեկուցում է, որ արդեն լրացել է յոթանասուն տարին և ցանկանում է իրագործել իր վաղեմի երազանքը՝ թույլ տալ Երուսաղեմ ուխտի գնալ: Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, որ վավերագրում նշված Փիլիպոս կաթողիկոսի տարիքը ստույգ չի, քանի որ, Դավրիժեցին, ով այդ դեպքերի ժամանակակիցն էր, նշելով կաթողիկոսի մահվան տարիքը՝ 1655 թվականը, ավելացնում է. «Նա կաթողիկոսություն արեց քսաներկու տարի, երեք ամիս, իսկ ինքը երբ վախճանվեց, վաթսուներեք տարեկան էր»[4]:

Հիրավի ճիշտ է նկատել Հ. Փափազյանը՝ այս հրովարտակը իր բնույթով տարբերվում է մյուսներից: Սա, փաստորեն, Փիլիպոս կաթողիկոսի ներկայացրած խնդրագիրն է, որի մեջ առաջ քաշված առանձին հարցերի վերաբերյալ շահը վավերագրի լուսանցքում տալիս է իր վճիռը[5]: Հետաքրքիր է, որ խնդրագրին իրոք շահը ընթացք է տվել ու հաստատել շահական կնիքով:

Պարսկերեն վավերագրերը կարևոր նշանակություն ունեն ինչպես Էջմիածնի վանքի և ամենայն հայոց կաթողիկոսության պատմության և Սեֆյան Իրանի հետ փոխհարաբերությունների ուսումնասիրության, այնպես էլ եզակի նշանակություն ունեն Գանձասարի եկեղեցական հարստության, վանական և տնտեսական կյանքի պատմության հարցերը քննելիս: Գանձա-

---

[1] Նո Նույն տեղում, վավ. 38, էջ 137-139:

[2] Նույն տեղում, վավ. 39, էջ 140-143:

[3] Նույն տեղում, էջ 142-143:

[4] Առ. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 272:

[5] Փափազյան Հ., նշվ. աշխ., վավ. 39, էջ 203:

սարի վանքը XVII դարի սկզբին դեռևս պահպանվել էր որպես հայ եկեղեցական իշխանության կենտրոն և ճանաչված էր մահմեդական իշխանությունների կողմից:

Գանձասարին վերաբերող վավերագրերից պարզ է դառնում, որ դեռևս XVI դարից սկսած՝ կաթողիկոսարանում սկսված աթոռակալական կռիվները շարունակվել են նաև XVII դարի սկզբներին, որից հաղթող է դուրս գալիս Հասան-Ջալալյանների տոհմը[1]: Հայտնի իրողություն է, որ XIV դարից սկսած Գանձասարի Աղվանից կաթողիկոսարանը գտնվել է Խաչենի Հասան- Ջալալյանների ձեռքում և հանդիսացել է այդ տոհմից սերված հոգևոր ներկայացուցիչների ժառանգական տիրույթը: Այն համազգային նշանակություն չուներ, և ձեռք բերված իշխանությունը տարածվում էր միայն Արցախի և Փառիսոսի շրջանների որոշ գավառների վրա[2]:

Շահական հրովարտակներում Գանձասարի վանքը անվանվում է «Աղվանքի Խաչենի» և «Խաչենի» վանք: 1606թ.-ին հրապարակված շահ Աբբաս Ա-ի հրովարտակից երևում է, որ մինչև 1630-ական թթ., երբ Էջմիածինը գտնվում էր տնտեսական խորը ճգնաժամի մեջ, Գանձասարի կաթողիկոսարանը, օգտվելով այդ առիթից, ընդարձակել է իր տիրույթները և իր հոգևոր իշխանությունն է տարածել անգամ Էջմիածնի որոշ թեմերի վրա[3]: Այդ ընթացքում Գանձասարին էին ենթարկվում Գանձակի, Ղարաբաղի, Շիրվանի, Շամախու և Զարուրբիլի (Սյունյաց նահանգի Սոթք գավառ, Սևանա լճից դեպի հարավ-արևելք) վանքերը:

Գանձասարի վանքին վերաբերող վավերագրերը գալիս են հավաստելու, որ վանքը շահագրգիռ է եղել Խաչենի և Վարանդայի շրջանի գյուղերից գանձվող պետական հարկերի հարցում, այդ գյուղերը որպես սեփականություն պատկանել են Գանձասարի վանքին[4]:

Էջմիածինն ու Գանձասարը մինչև XIX դարը չեն կարողանում իրար մեջ բաժանել Շիրվանի և Շամախու թեմերը: 1650թ.-ի շահ Աբբաս Բ-ի հրովարտակից պարզ է դառնում, որ դեռևս 1634թ.-ին շահ Սաֆիին վերոնշյալ

---

[1] Նույն տեղում, վավ. 5, վավ. 23:

[2] Այս մասին մանրամասն տե՛ս Ջալալյան Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս Բ, Տփխիս, 1858, էջ 485-487, Փափազյան Հ., Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ Ա (ԺԵ-ԺԶ դդ.), Եր., 1956, վավ. 18, նույնի Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ Բ, էջ 153-155:

[3] Փափազյան Հ., նշվ. աշխ., վավ. 5, էջ 84:

[4] Նույն տեղում, վավ. 13, վավ. 31:

թեմերը խնդրագիր են ներկայացրել, որ իրենց թեմը Էջմիածնի ենթակայությանն է պատկանում[1]: Նրանք իրենց ձեռքի տակ փաստեր են ունեցել, որոնք ապացուցել են, որ իրենք հնուց Էջմիածնի կաթողիկոսին են ենթարկվել, ուստի շահը հրաման է արձակում, որ Գանձասարի կաթողիկոսը նրանց թեմերի գործերին իրավունք չունի խառնվելու[2]: Բայց քանի որ հրովարտակը թվագրված է 1650 թվականով, ապա ենթադրում ենք, որ Շիրվանի և Շամախու թեմերի հանդեպ դեռևս այդ ժամանակ Գանձասարը իր դիրքերը չի զիջել:

Այսպիսով, XVII դարի առաջին կեսին հայոց եկեղեցու և Սեֆյան Իրանի փոխհարաբերությունների հարցում կարևոր նշանակություն ունեցող Մատենադարանի պարսկերեն հրովարտակներով հայոց հոգևորականությունը ունեցել է տարբեր արտոնություններ՝ կապված գանձագին մուլքերի, մուաֆության, վակֆային, թաֆուվաթ-ե ջիզյայի, մալահոջաթ և չոբանբեկի, վանքերի նորոգման, Էջմիածինը հայ համայնքների ինքնավարության պաշտպանության, Գանձասարի վանքի հարկային համակարգի, Շիրվանի և Շամախի հոգևոր թեմերի իրավունքների հետ կապված: Այդպիսի իրավունքներով հայոց եկեղեցին Իրանի ազդեցության ներքո պաշտպանել է իր իրավաքաղաքական և սոցիալ-տնտեսական իրավունքները: Այս իմաստով դիտարկված հրովարտակները այն սկզբնաղբյուրներն են, որոնք համապարփակ տվյալներ են բովանդակում հայ-իրանական դարավոր հարաբերությունների ուսումնասիրության հարցերի շուրջ և լրացնում են XVII դարի Հայոց պատմությանը վերաբերող ներքին և արտաքին քաղաքականության որոշ բաց էջեր:

---

[1] Նույն տեղում, վավ. 42, էջ 147-148:

[2] Նույն տեղում, վավ. 22, էջ 109-111:

THE REFLECTION OF THE CHURCH-STATE RELATIONSHIP IN THE EDICTS OF PERSIAN INTERESTS IN THE FIRST HALF OF 17th CENTURY DURING THE PERSIAN RULE

HAYRAPETYAN KANAKARA
GSU Lecturer,
Specialist at GSU Quality Assurance Department
e-mail: q.hayrapetyan@gsu.am
GOZEYAN VAHE
2nd-year Master student of History Department, Faculty of Humanities GSU
e-mail: vahegozeyan@mail.ru

The article refers to the edicts and charters of Safavid shahs of the first half of the XVII century (Shah Abbas A, Shah Sef, Shah Abbas B). Shah's edicts concern the taxes levied on the Armenian Church, their types, legal status and tax benefits of the Soorb Etchmiadzin, the Gandzasar Catholicosate and their monasteries and estates. The examination of the edicts allows us to clarify the main direction of the shah policy towards the Armenian clergy, living under the rule of Sefyan Iran, the role of Etchmiadzin in the relations with the Iranian authorities and the protection of the Armenian monasteries and estates under Iranian subordination being of vital importance.

Key words: *Safavid Iran, Persian documents, Eastern Armenia , Shah Abbas A, Shah Sefi, Shah Abbas B.*

ОТРАЖЕНИЕ ВЗАИМООТНОШЕНИЙ ЦЕРКОВЬ - ГОСУДАРСТВО В МАНИФЕСТАХ ПЕРСИДСКИХ ШАХОВ ПЕРИОДА ПЕРСИДСКОГО ВЛАДЫЧЕСТВА (ПЕРВАЯ ПОЛОВИНА XVII В.)

АЙРАПЕТЯН КАНАКАРА
Преподаватель ГГУ,
Специалист отдела по обеспечению качества ГГУ
Ключевые слова: q.hayrapetyan@gsu.am
ГОЗЕЯН ВАГЕ
Студент 2-ого курса магистратуры отделения история гуманитарного факультета ГГУ
Ключевые слова: vahegozeyan@mail.ru

В статье говорится об указах и хартиях шахов Сефевидов первой половины XVII века (Шах Аббас А, Шах Сеф, Шах Аббас Б). Указы шаха касаются налогов, взимаемых с Армянской Церкви, их видов, правового статуса и на-

логовых льгот Сурб Эчмиадзина, Гандзасарского католикосата и их монастырей и поместий. Изучение указов позволяет нам прояснить основное направление политики шаха в отношении армянского духовенства, живущего под властью Сефянского Ирана, роль Эчмиадзина во взаимоотношениях с иранскими властями и в вопросах защиты находящихся в его подчинении армянских монастырей и поместий.

Ключевые слова: *Сефевидский Иран, персидские документы, Восточная Армения, Шах Аббас Первый, Шах Сефи, Шах Аббас Второй.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 25.08.2021թ.:
Հոդվածը գրախոսվել է 01.10.2021թ.: